

ԳԱՐԵՒԻԿ ՖՆՏԳԼԵԱՆԻ ՆԱՄԱԿՈ

ԱՌ ՏԻԿԻՆ ԱՆԱՑԻՍ⁽¹⁾

(ԵՐ ՎԵՐՋԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԻՆ ՄԻՆ)

Spa Hotel, Buxton, Derbyshire

20 Մարտ 1937

ՄԵծապէս յարգելի եւ սիրելի Անայիս,
իրօք մեծ յարդ ունի ինձի տրտմակցու-
թեան ձեր պատուական նամակը, որուն կը ցա-
ւմ որ ուշ կը զրկեմ չնորհակալութեան պա-
տասխանս: Ինչպէս կը տեսնուի վերնազրէն,
ձգեցի քաղաքս, տեղս, շրջեակս ուր այնքան
անուշ բայց անդութ յիշատակներ կային սքան-
չելի ընկերուհիէս որ թռա՞ւ քովէս յանկար-
ծօրէն եւ կէս զգայազիրկ թողուց զիս ցաւէ
ընկճուած:

Ամբողջ կեանք ըսուած բանը հիմա սին եւ
անիմաստ կ'երեւայ ինձի, քանի որ վերջին

1) Գառնիկ Ֆնտգլեան, ինչպէս եւ տիկին
Անայիս, իրենց մանկութիւնը Պէշիկրաշ, Օհ-
լամուրի քանաստեղծական ծառաստանին մօ-
տիկ անցուցած են, նոյնպէս եւ Գարակէօգեան
զերդաստանին պատկանող այն շնորհալի եւ
ազիւ Հայուիին որ Ֆնտգլեանի կենակիցը պի-
տի ըլլար: Ֆնտգլեան իր այս նամակը, որուն
մէջ ան իր զգայուն մարդու ամբողջ զորովալիք
վիրաւոր սրուլը եւ ներհուն մուշի ծանրախո-
հութեամբը կ'երեւայ, ուղած է մանկութիւն-
ընկերուհիի մը, քրոջական վաղեմի քարեկա-
մուհիի մը եւ գրչակցի մը:

Ա. 2.

արարուածը (որքան ազ հաճելի եւ փայլուն
եղած ըլլան նախորդները) զուտ ողբեթու-
թիւն է. քանի մը բահ հող վրան կը նետուի
ու կը լմննայ ամէն բան, ինչպէս նկատնել
կուտայ Փասքալ: «Առանց իմ կամքիս եկայ ես
աշխարհ, հաճութիւնս չառած»՝ հարկ կ'ընեն
երթալ»: առ ազ պարսիկ բանաստեղծ Օմար
Խայեամէն: Արեւմուտք, Արեւելք, ամէն խոր-
հող միաբան է կեանքի դառն առեղծուածին
դնահատման մէջ: Ողբ, բողոք, ընդվզում,
հաւասարապէս անմտութիւն է Տիեզերքի
մեծ Ռւժին յօրինածին ու տնօրինածին հան-
դէպ: Կորագլուխ համակերպիլ, մունջ կսկծալ
— ուրիշ ոչինչ կայ ընելու: Սիսալեցայ, բան
մըն ալ կայ. մնացող սիրելիներուն առջեւ ա-
րիանալ (գէթ արտաքուստ), անոնց մէջ տես-
նել նշմարանքները, շարունակութիւնը պաշ-
տեցեալին չքնաղ, խնկելի յատկութիւններուն:

Իրաւունք ունիս, սիրելիս: Մենք պէտք է
հասուցանենք երկար ապրողներու զաժան տու-
գանքը, շուրջը զատարկուիլ տեսնել սիրելի-
ներու, մտերիմներու: Անոնք որ զեռ կը մնան
մեզի, աւելի կ'անուշնան, ինչպէս դուք ինձի:

Սրով չնորհակալ, մնամ Զերդ միշտ

Գ. Ֆնտգլեան